Ոչ պաշտոնական թարգմանություն

Դեսպանների և միջկառավարական կազմակերպությունների ղեկավարների կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ հայտարարությունը

ԵԱՀԿ մասնակից պետությունները ներկայացնող դեսպանները և Հակակոռուպցիոն միջազգային աշխատանքային խմբի[1] մասնակից միջկառավարական կազմակերպությունների ղեկավարները հանդիպեցին 2006թ. հունիսի 8-ին և տեղեկություններ փոխանակեցին Հայաստանում հակակոռուպցիոն ռազմավարության և 2003-2006թթ. գործողությունների ծրագրի իրականացման ընթացքի մասին:

Նրանք նշեցին, որ առաջիկա ամիսները հատկապես կարևոր են լինելու Հայաստանում հակակոռուպցիոն աշխատանքների համար՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ կառավարության առկա հակակոռուպցիոն ռազմավարությունը ավարտվում է 2006թ., և իշխանությունները մշակում են նոր ռազմավարություն և գործողությունների ծրագիր:

Միջազգային հանրության խորհրդատվության օգտակար լինելու մասին ՀՀ կառավարության մի շարք հայտարարություններից հետո, մասնակիցները նիստի ժամանակ հայտնեցին համապատասխան աջակցություն ցուցաբերելու իրենց պատրաստակամությունը: Միջազգային հանրությունը բազմաթիվ պատճառներ ունի կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում կառուցողական դերի վերապահում ակնկալելու համար: Կոռուպցիան խոչընդոտում է Հայաստանի տնտեսական զարգացմանը: Այն բացասաբար է ազդում քաղաքացիների և կառավարության հարաբերությունների վրա: Բացի այդ մեկ երկրում կոռուպցիայի նվազեցմանն ուղղված ջանքերը դրականորեն են ազդում այլ երկրների անվտանգության և տնտեսական բարեկեցության վրա, քանի որ կոռումպացված կառույցները ազգային սահմաններ չեն ճանաչում:

Կառավարության կարևորագույն քայլերից մեկը պետք է լինի ներկա ռազմավարության ազդեցության գնահատումը և այդ գնահատման աշխատանքներում պետք է ներգրավված լինի Հայաստանի քաղաքացիական հասարակությունը: Նման գնահատում անցկացնելու առաջարկ է արվել նաև կոռուպցիայի դեմ պայքարող երկրների՝ GRECO-ի կողմից, որի առաջարկներն արժանացել են աշխատանքային խմբի լիակատար հավանությանը: GRECO-ի կողմից անցկացված հետազոտության մեջ առաջարկվող մեկ այլ օգտակար քայլ է կոռուպցիայի փաստացի հետևանքների մասին պատկերացում կազմելը՝ հետազոտությունների և այլ ուսումնասիրությունների միջոցով:

Հայաստանում միջազգային հանրության ներկայացուցիչները ընդունում են, որ ՀՀ կառավարությունը որոշ նախնական քայլեր ձեռնարկել է՝ վերջին երկու և կես տարվա ընթացքում կոռուպցիան նվազեցնելու ուղղությամբ և ողջունում են այդ քայլերը: Ինչևիցե, աշխատանքը հեռու է ավարտուն լինելուց և կոռուպցիան դեռևս խիստ մտահոգություններ տեղիք է տալիս Հայաստանում: Որպեսզի Հայաստանը կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությամբ իրական առաջընթաց արձանագրի խիստ կարևորվում է Հակակոռուպցիոն ռազմավարության և դրան կից գործողությունների ծրագրի մշակումը, որտեղ հատուկ ուշադրություն կդարձվի իրականացման և դատական հետապնդման հարցերին:

Միջազգային հանրության ներկայացուցիչները ծանոթանում են նոր ռազմավարության նախագծի հետ և ուրախ կլինեն ինչպես կոլեկտիվ, այնպես էլ

---

[1] Հակակոռուպցիոն միջազգային աշխատանքային խումբը հիմնվել է 2001թ.՝ միջկառավարական կազմակերպությունների և կոռուպցիայի դեմ պայքարի աշխատանքներում ներգրավված Հայաստանում գտնվող դեսպանատների աշխատանքները համակարգելու նպատակով: Խումբը կանոնավոր կերպով հանդիպումներ է կազմակերպում, որի աշխատանքները համակարգում է ԵԱՀԿ երևանյան գրասենյակը:

անհատական կարծիք արտահայտելու հնարավորությունների համար: Աշխատանքային խումբը հույս է հայտնում, որ ՀՀ իշխանությունները կօգտվեն համաշխարհային փորձի հիման վրա ռազմավարության արդյունավետությունը գնահատելու միջազգային հանրության կողմից առաջարկվող աջակցությունից: Միջազգային աշխատանքային խումբը ակնկալում է ՀՀ կառավարության հետ երկխոսություն ծավալել ռազմավարության նախագծի վերաբերյալ: Միջազգային աշխատանքային խումբը գտնում է, որ խիստ կարևոր է, որպեսզի ռազմավարության նախագծի և գործողությունների ծրագրի վերաբերյալ արված մեկնաբանությունների և փոփոխությունների գործընթացում կառավարությունը ներգրավի քաղաքացիական հասարակությանը:

Ռազմավարության և գործողությունների ծրագրի մշակումից հետո ակնհայտ է, որ դրա հաջող իրականացման համար հարկավոր է ունենալ արդյունավետ մոնիտորինգի, բարելավման խթանների և իրականացման պատշաճ մեխանիզմներ, այդ թվում կարգապահական միջոցառումներ: Մասնակիցները համաձայնեցին, որ օգտագործելով Միջազգային աշխատանքային խմբի մեխանիզմները և երկկողմանի հաղորդակցությունները՝ կշարունակեն կատարելագործել ձեռք բերված փորձը և պարտավորությունները, ոլորտին աջակցելով մոնիտորինգի, ինչպես նաև վերլուծական ու գործառնական գործիքների միջոցով:

Ավարտելով, մասնակիցները կրկին նշեցին համատեղ պարտավորությունների և գործողությունների կարևորությունը կոռուպցիայի դեմ պայքարում, որտեղ իրենց դերն ունեն կառավարությունը, մասնավոր օղակը, հանրությունը, քաղաքացիական հասարակությունը և միջազգային հանրությունը: